

գաւորաց մէջ Պրոկոպի ակնարկած Արշակը գտնելէ՝ Վերջապէս չի յիշատակուի որ դարձեալ Թէոդոս Բ. ի կառավարութեան տեմանակ Հայաստանի համար Պարսկաստանի հետ մղուած պատերազմ մը։ Իւր երկար կառավարութեան միջոցին արեւելեան պետութեան հետ հաստատուն պահուած խաղաղութիւնը միայն մէկ անգամ 420—422 խանգարեցաւ՝ Պարսից քրիստոնէից դէմ յարուցած հալածանաց պատճառաւ, սակայն նոյն պատերազմին վայրը Հայաստան չէր, այլ Միջագետքը՝ Հայաստանի բաժանումէն ոչ նոյն միջոցին տեղի ունեցաւ եւ ոչ ալ քանի մը տարի ետքն, երբ Պարսկաստան տանը միացուեցաւ։

Բոլոր այս պատճառներուն համար պէտք է որ Պրոկոպի տուած տեղեկութիւնը մերժենք իրեն ոչ արժանահաւաստ։

(Ըր-ն-ի-ն-ի-ն)

ԻՐ. Կ. ԳԻՒՏԵՐՈՐԱՔ
Գնմ. Թրգմ. Է. Մ. Վ. ՆՈՐԵՈՒՆԱՅ



Ս. ՅԱԿՈԲ

ԱԶԳԱՅԻՆ ՀՐԻՇՆԳԱՆՈՑ

(Ըր-ն-ի-ն-ի-ն-ի-ն-ի-ն)

Ի.

ԺԻ. ՀՈԳԱՐԱՐԱՆՈՒԹԻՒՆ

1908—1911.

Մամենան Պողոս Առնանապետ

Մէնէվիշնան Հ. Գարրիէլ Ժ. Վ. Միսար.

Միս. Վիշն. Առնանապետ

Գասապեան Յովսէփ Խորհրդական

Արէլ Գեորգ Հաշունակալ

Նուրիման Միքայէլ Գանձապետ

Անկելանոցի հոգը Ոսիեան Գրիգորէն Հոգաբարձուացս յանձնուէն ետքը՝ իրենց առաջին գործը կ'ըլլայ Ս. Թակոբայ մերձակայ տունին պատրաստութիւններովն զբաղել, որ ըստ սովորութեան այս տարի եւս փառաւոր հանգիստի մատարուեցաւ, մանաւանդ թէ աւելի ըլլալով՝ մատարան առաք խորանին Ս. Թակո-

բայ պատկերին փորցուած նմանահանութիւնը 7×11 սանդիմար մեծութեամբ, որ նախորդ Հոգաբարձութենէն շինել տրուած էր, պատարագէն վերջը առաջին անգամ ըլլալով Ժողովորդեան մէջ ցրուեցաւ։ Այս պատկերին ետեւագրութեան մէջ Անկելանոցիս շինութեան թուականը վերապահն 1832 գրուած է, մինչ այն թուականին դեռ երկիրն անգամ չէր գնուած (տես անդ էջ 35 եւ ԳԺ. Ախ. Թիւ 4638)։ Ցոնական պատրաստութեամբ հանդերձ այս նոր Հոգաբարձուները կը ջանան միանգամայն վարձել Անկելանոցին բանջարանոցը եւ տունները, զեղելով իրենց նախորդներէն վարձքերուն վրայ եղած յաւելումը, որոն համար անոնցմէ շատը պարապ մնացած էր։

Տարի մը եւ աւելի բոլորած էր Ալաշ-վերտեան կտակին վրայ, եւ կառուցանելի յարկաբաժնի տեղոյն ընտրութիւնը կրկին երեւոյթ առած առանց վերջնական որոշողութեան, եւ ահա երրորդ երեւոյթ մ'եւս կ'առնէ։ Կտակագիրը իր երկարատեւ հիւանդութեան անդիւնէն լսելով Կ. Պատրիարքին բերնէն թռած «Միւթէվէլլի», անունը (տես վերը), նոյն իշխանութեան կողմանէ, կ'երեւայ, ապագայ ոտնձգութիւն մը կը գուշակէ, վասն զի իր կտակին համար կը փութայ առանձին կտակական տարներ կարգել, ինչպէս կ'իմացուի Հիւրմիւզ Արտաշէս էֆ. ի հետեւեալ յայտարարութենէն յատենի Աջգ. Վրջ. Ժողովոյ գումարեալ 1908 Դեկտ. 6՝ թէ Տիկին Աննա Մըրալը եւ Տիկին Նեկտառ Տիւզ, զստերք կտակագրին, Սինապեան Գրիգոր եւ եւ Հէօճէթի շէշլի. ու (օրինական մուրհակ) ցկեանս Միւթէվէլլի կարգուած ենք Ալաշվերտեան կտակին, եւ մեր մահունէն ետքը անոր մատակարարութիւնը Աջգ. Վրջ. Ժողովին պիտի անցնի։ Ըստ Նէօճէթի մենք լիազօր իշխանութիւն ունինք կտակին գործադրութեան հսկելու, եւ կամ թէ՛ հարկը ստիպէ, մինչեւ անգամ կտակին ինչ ինչ կէտերը բարեփոխելու, որով կը ջնջուի Հոգեւոր Տիկնը եւ Ալաշվերտի Յովհաննէս էֆ. ի մէջ 1907 Դեկտ. 12/25ին կնքուած 17 յօդուածով պայմանագրութիւնը։ Վարչականը Նէօճէթի տրամադրութեանց լիովին տեղեկանալու եւ չիւնութեան ձեռնարկելու համար՝ բաղձնը կը յայտնէ նոյնին վաւերացեալ օրինակը՝ առնելով Պատրիարքարանի դիւանին մէջ։ Իրաւացի կը տեսնուի Վարչութեան այս բաղձնաբեր, եւ կը խոստացուի կտակականա-

1 Այս պատերազմին նկատմամբ տես Soerates, VII. 8. 16. Nöldecke, Aisätze, 115. Tabäri, 108. Կրտ. 2։

ներէն զըզեւ տալ Ալահշվերտիին բաղձացուած օրինակէր:

Օրեր շարաթներ կ'անցնին Տէօճէթ-ին օրինակը շարժուի, մանաւանդ թէ խոստացողները ժողովքէն կը բացակային հակառակ կրկին հրաւիրագրոց, որով Արարութիւնը կը ստիպուի երեքեւեւ իր հրաւիրագրիը Սինայեան եւ Հիւր-միշէ կ'էֆէնտիներուն, որոնք 1909 Յունուար 2 գումարեալ նիստին իրեն. Միւթէվէլլի ներկայանալով կը յայտարարեն թէ «Ասէ առաջ Ալահշվերտեան յարկաբաժնին թաքսի մի մեծ պողոտային վրայ կառուցման համար» տեսանք որ ոչ Ս. Յակոբայէ չօգտարարութիւնը եւ ոչ ալ Ոսկերեան Եկեղեցւոյ թաղականութիւնը չկրցան ինչ ինչ նկատումներով որոշողութեան մը յանդիմ. իսկ միւս կողմանէ Ս. Գրիգոր Լուսաւորիչը Ռուսներուն Ազգ. Վրէ. Ժողովոյ հակողութեան յանձնելու ինքիքը անգործագրելու գարձաւ, մենք ալ անկախ կերպով կտակին գործադրութեան ձեռնարկեցինք մինչեւ ցնոր անօրինութիւն: Այս յայտարարութեան վրայ Պոլսոս էֆ. Մամճեան ժողովոյն կողմանէ յանձնառու կ'ըլլայ քանի մ'օրէն գրաւորապէս ներկայացնելու այդ խորհուրդներուն վերջնական համաձայնութիւնը: Եւ իրօք ալ յաջորդ նիստին յետագայ տեղեկագիրը կը մատուցանէ Ազգ. Վրէ. Ժողովոյ:

Այս երեկոյ ըստ հրաւիրանաց Պատ. Վրէ. Ժողովոյ անգամ Մեծէպ. Պոլսոս էֆ. Մամճեանի եւ իր ներկայութեան Ս. Յակոբայէ Անկեանցի Հողաբարձութեան եւ Ս. Յոհան Ոսկերեան Եկեղեցւոյ թաղականութեան անդամներն զուամարտելով ի ժողովատեղին Ս. Յոհան Ոսկերեան Եկեղեցւոյ Բերայի մեծ փողոցի երկու քաբայէն առեւերուն յարկաբաժնի վերածուիին եւ փութով շինութեան ձեռնարկելին վերջնականապէս որոշուեցաւ ըստ ստորագրութեան Ալեմ. Յովհ. Ալահշվերտիի առաջնութեան:

Եւտ խորհրդածութեանց եւ քննութեանց քարտէսի ժողով համաձայն գոյացուց որ այն յարկաբաժնիք յետ շինութեան կրնայ տարեկան շուրջ 1.000 օսմ. ոսկի եկամուտ առաքելու, ուսկից բաձնալով 250 օսկոյ գումար մը այլ եւ այլ ծախուց փոխարէն՝ կը մնայ 750 օսկի, որմէ Լուսաւորչեան Ռուսներուն յատկեալ 240 օսկին ալ հանելով՝ որ կանոնաւորապէս ամէն տարի անհրաժեշտ պիտի վճարուի այս յարկաբաժնին համար, մնացեալ եկամուտը պիտի բաժնուի հաւասարապէս Ս. Յակոբ Անկեանցի Հողաբարձութեան եւ Ս. Յոհան Ոսկերեան Եկեղեցւոյ թաղականութեան մէջ, պայմանաւ որ թէ վարձուի եւ թէ եկամուտները քանձելու պաշտօնը՝ Հողաբար-

ձութիւնը եւ թաղական խորհուրդը միասին պիտի կատարեն:

Բերա, 14/27 Յունուար 1909:

Ստորագրեալը

Պոլսոս էֆ. Մամճեան

Անգամ Ազգ. Վրէ. Ժողովոյ

Ս. Յակոբ Անկեանցի Անգամ	Թաղական խորհուրդ Անգամ
Պ. Ճամճեան Գէորգ Արէշ Յովսէփ Գառապեան Միքայէլ Նուրիճեան	Նիկող. Ծ. Ա. Պաքչեան Մեծ. Ժող. Ս. Յոհ. Ոսկերեան Եկեղեցւոյ Յ. Թաղայեան Քոզմի Գէրիմ Յ. Կիւմլեշեան Պոլսոս Արաբեան

Այս տեղեկագրոյն օրինակը կը զըզուի Արարութեան Միւթէվէլլի Սինայեան եւ Հիւր-միշէ կ'էֆէնտիներուն, եւ դարձեալ կը խնդրուի յաջորդ նիստին ներկայացնել իրենց Միւթէվէլլի.ութեան Տէօճէթ-ի, տեղեկանալու համար անոր պարունակութեան եւ արձանագրութեանց մէջ օրինակելու, որպէս զի գրաւորապէս ընշուած ըլլայ նախորդ պայմանագրութիւնը եւ անոր վրայ յեցած նոր կարգադրութիւնը: Սինայեան 1909 Յունուար 30ի նիստին մէջ հարկ չի տեսներ այսպիսի պաշտօնական ձեւակերպութեանց, քանի որ մենք միւթէվէլլիքս, կ'ըսէ պարտաւոր չենք ոչ որի մուրհակ ներկայացնելու, սակայն ժողովքէն դուրս ամէն անգամ կ'ըսէ մեզի զի մեզ եւ ուշի ուշով կարգալով տեղեկանալ մուրհակին տրամադրութեանց: Մեզ գրուած էր թէ Ս. Յակոբայէ Հողաբարձութիւնը եւ Ս. Յոհան Ոսկերեան Եկեղեցւոյ թաղականութիւնը համաձայնած են յարկաբաժնիք թաքսի մը ճախով (մեծ փողոց)ին վրայ կառուցուելուն, մենք ալ ասոր ուրախ եղանք եւ կը հաւանինք: Հակառակ պարագային պիտի պարտաւորուէինք տարբեր կարգադրութիւն մ'ընելու: Ըսուած էր միանգամայն թէ 240 օսմ. ոսկին Ռուսներուն յատկացուի: Նախ որ Միւթէվէլլիք չեն ուզեր տալ այդ գումարը մինչեւ որ այն հաստատութիւնը Ազգ. Վրէ. Ժողովոյ ուղղակի հակողութեան չենթարկուի: Եւ երկրորդ յիշեալ գումարին անխափան եւ ճշգրիտ վճարման համար պէտք է երաշխաւորութիւն մը ցոյց տալ մեզի: Բաց աստի կտակուած գումարն ալ Հայ Աթոռի մէջ Հասարակութեան անուան փոխանցելու հարկը չի տեսնուի, վասն զի Զարտարապետաց յանձնառութեան տեսրին մենք պիտի ստորագրենք եւ

ամեն վճարումները մենք պիտի կատարենք: Խնդիրը այս վիճակի մէջ է, ժողովս թող խորհի, թէ՛ ինչպէս ընդունիլ որ եւ առաջարկութիւնները, մեր կողմանէ պարտաստեցանութիւն կայ ամեն վայրկեան: Այս ամենը կը զուգե՛, եւ Հիւրմիւզ էֆ. ինչ հետ ժողովքէն կը մնին:

Մինչ Ազգ. վարութիւնը այս կարգի գործերով կը զբաղէր, Ս. Յակոբ կը զբոսներ իր մէջ կարեւոր կայունածին հասոյթէն, որ քանդուելով իր հողը կառուցանելի յարկաբաժնին հողին կէսը պիտի կազմէր, որուն համար տարիէ մ'ի վեր զայն անվարձ կը պահէր: Հետեւաբար Անկեանոցին նախատեսեալ հաշիւը խանգարուելով՝ գրամական մեծ անձկութեան մէջ կ'իյնայ, եւ Պօղոս էֆ. ճամճեան իրը Ատենայեան Հոգաբարձութեան Ազգ. վրչ. ժողովոյն մէջ ի 17 փետր. որուն անգամակցութիւնն եւս ունէր, կը յայտարարէ թէ՛ «Ս. Յակոբ ընդունելու աստիճան պարտքի տակ կը գտնուի: Այս տնտ. վիճակին իբրեւ գարման կրնան մտածուիլ շատ միջոցներ, որոնց գննէ միջոց գործարութիւնը վարչականի հաւանութեան կը կարօտի: Այսինքն կաթողիկոսական Աթոռը Ազարեան հրիտակին 274 : 93 ոսկի օսմ. կը պարտի: Նորին երանգատը սիրով կ'ուզէ այդ գումարը Ս. Յակոբայ տալ ի հաշիւ հրիտակին, Ազարեան էֆենդին ալ տար կը հաւանի սա պայմանաւ որ՝ Հոգաբարձութիւնը մուրհակ մը տայ իրեն եւ անտոկոս գործածէ այդ ստակը ամսական 6 ոսկի վճարելով եւ երաշխաւորութիւն ցուցունելով մեծ նւատոյժին վրայ գտնուած թիւ 10 տունին հասոյթը: Ժողովը թէպէտեւ կը թելադարէ այս առաջարկին գործարարութիւնը, սակայն կը պահանջէ որ յաջորդ նիստին ճամճեան գրաւորապէս ընէ այս առաջարկը, ինչ որ կ'ընէ եւ կ'ընդունուի իր յարակից պայմաններովն հանդերձ:

Հոգաբարձութիւնը ուզելով երկու գլխաւոր նորութիւններ ներմուծել Անկեանոցի մէջ՝ գործարարութեանը համար արտօնութիւն կը խնդրէ փետր. 18 նամակովն, որ 1909 Մարտ 19 Ազգ. վրչ. ժողովին մէջ կարդացուելով՝ հետեւեալները կ'իմացուին:

Ա. Հոգաբարձութիւնը նկատելով որ Ս. Յակոբայ դպրոցը, որուն համար ամսական գրեթէ 16 օսմ. ոսկի ծախուելով՝ չնչին արդիւնք մը կ'արտադրէ, եւ ուզելով այս գումարը աւելի արդիւնաւորապէս գործածել՝ մտադրէ թէ 40—45 արականներու թափակով աշակաւ դպրոցներ զետեղել եւ անոնց կերպուրը

հայթայթել, յառաջագէտները զննելով Ս. Գ. Լուսաւորիչ Ուսումնարանը, 25—30 հատը Սարըզ Աշաճը Միտիմարեան վարժարանը եւ ձայն ունեցողներն ալ 5—10 հոգի Ոսկեբերանի դպրոցը:

Բ. Նորութիւնն է հաստատուն հիմքու վրայ զննել Հիւանդանոցի ներքին կառավարութիւնը, մարութիւնը եւ կարգադրութիւնը, յանձնելով զանոնք Գաղղիացի Գթութեան Քոյրերուն կամ Մայրապետներուն: Այս նպատակաւ Հոգաբարձութիւնը խորհրդակցութեան եւս մտած է արդէն անոնց հետ, որոնց պայմանները գիւրամատչելի եւ մանաւանդ այս գրութիւնը Հոգաբարձութեան կողմանէ կոտորուկան կը նկատուի: Երբեք Անկեանոցին: Վարչականը անհրաժեշտ կը դասէ Ազգ. երեսփոխանական ժողովոյն կարծիքը հարցնել այս վերջին խնդրոյ մասին, իր տեսակին մէջ բուրովն նոր: Այս կարգի գործոց շարունակութիւնը սակայն գրեթէ ամիս մը կ'ընդհատէ Ատենայի մարդասնոյշ գաղանային կոտորածը ի 1909 Ապրիլ 1, որուն հետեւանօք ազգային ամեն պաշտօնէութիւնը գործէ կը դադարին սգալու համար իրենց համարիւն եղբայր բիւրաւոր կորուստը: Աւելցնենք ասոր վրայ նոյն ամսոյն 11ին Կ. Պոլսոյ մէջ պատահած կուսակցական պատերազմը, որուն մէջ Ս. Յակոբն ալ կ'ունենայ իր դերը, որ հետեւեալ կերպով կրնայ պատկերանալ: —

Արշալոյս էր, Վոսիփոի եւ Ոսկեղիւրի բնակչութիւնը բարնանային զովագին օդով առաւօտեան անուշ քունին ճաշակը կ'առնէր, յանկարծ որոտնդոտ բոմբիւններ, զինուց շաշիւններ եւ երիվարաց խնդիւններ կը բեկանէն անոր ոսկեզօծ երազները, եւ ամեն դրտարժամ արթննալով՝ կը տարակուսէր իր քունին վրայ: Սեւակիկի ազատարար բանակն էր այն զարթոյնը, որ Կ. Պոլսոյ ամեն կողմէն յարձակելով՝ բիւրաւոր հրաշանաճութեամբ եւ թնդանթաճութեամբ անձրեւի պէս գնդակ կը տեղացներ նուաճելու համար Սուլթան Համիտ Բ.էն կաշառուած երգիւնազան զինուորականութիւնը եւ Օսմանեան Սահմանադրութեան վարչապետին հիմեր վերահաստատելու: Այս գործողութեան ժողովուրդն ալ իւրովսն կ'օժանդակէր առաջնորդելով պատերազմիներուն՝ ուր որ պիտի երթային, կ'օգնէր թնդանթի կառքերուն փոխադրութեան, եւ պաշտօնաց ջուր եւ օշորակ կը մատուցանէր: Միջօրէին մաս արդէն տրեւէր, որ ամեն զինուորական վայրերուն,

ամեն գործ վերջացած, միայն ազատութեան զոհերն էին, որ արեան մէջ կը լողային մեռած կամ վիրաւոր, եւ գետնատարած կը սպասէին երբայրական ձեռքի մը հանգչեւոր համար ոմանք անկողնոյ մէջ եւ ոմանք՝ գերեզմանի։ Մօտ էր Թաքսիմի Թնդանօթմաձիգ զինուորաց ձմբանոցին Հայ Կաթողիկէից Ս. Յակոբ Ագգ. Հիւանդանոցը, որ բացաւ իր դուռները անօր մարդանքի հրապարակին վրայ ինկած ազատութեան ախոյեաններուն առջեւ, ուր արեւելութեամբ ժողովրդեան պատգարակներու վրայ փոխադրուեցան վերաւորները եւ անմիջական դարձանները մատուցուեցան, մեռածներն ալ Թաքսիմի կառքերով կրուեցան ի Հիշի, որուն մանրամասնութիւնը գէպրիկ երրորդ Տառն Տառն մէջ հրատարակեց առանձին յօդուածով¹, զոր հաստատարիմ Թարգմանութեամբ յատալ կը բերենք։

Ս. Յակոբ Հիւանդանոցը, զեանդեալ ի Պանկագի, առաջին եղաւ օգնութեան արգէնք մը կարկանդակ այն քաղաքի զինուորաց, որ Թաքսիմի վրայի եւ Թաքսիմի գործանոցներուն յարակիցութեան մէջ ինկած դիտապատու։ Այս դիտապատուին 30ի չափ պատապարտուած են Հիւանդանոցի հասարակաց սրահին մէջ, եւ դարձանուած Հայ բժշկաց խումբին առաջնորդութեամբ Բժշկական Դոկտ. Ֆրիշմանեանի եւ վիրաբուժապետ Դոկտ. Զարգարեանի։

Այս Հիւանդանոցին կալանածոց մեծ յարկարածին պատմական պիտի ըլլայ, փաս զի անոր երրորդ յարկին յարձակող բանակին հերոսներն մին էնվէր Պէլ Կրակերի որ հրամանները Թնդանօթմաձիգ զինուորաց որ Ս. Յակոբ վրայ գրան առնել գիրք բռնած էին։

Թնդանօթի բուժմը մը Հիւանդանոցիս ժողովարտահան պատմութեանցիւմ կը յիշատակէ ինչ որ կայ անոր մէջ, Հոն կը դիմէ Էնվէր Պէլ տեսնելու համար աւերումը։ Հայրանայի ներկայացուցչին եւ Աստուծոյ դիտապատու զինուորական կցորդաց Տիկինները երկէ Հիւանդանոցս դալով՝ կը խնամեն քաղաքի զինուորները եւ կը նուիրեն անոնց ծուխ, շաքար, նարինջ եւ անուշ պաքսիմաս։

Հիւանդանոցի Պատուարժան Լոգարար-ձութիւնը, ինչպէս նաեւ ներքին պատմութեան թիւը ամեն շանքի զործ կը գին կատարելու իրենց պարտականութիւնը Օսմանեան հայրենիքին այս աննուաւ որդւոց հանդէպ։

Այսօր ժամը 11ին ըստ Ս. վիրաւորներուն սրահ լուսանկարուեցաւ²։

Վերոյիշեալ Տիկինները ստեպ կը կրկնեն իրենց այցելութիւնը եւ ուրիշ շատեր ամեն ազգէ, ինչպէս եւ այլեր կու գան տեսնելու եւ միմեկարեւու վիրաւոր զինուորները, որոնց մասին բազմադիմ գովասանքներ կ'արձանագրեն Անկեւանոցիս օրագրութեանց մէջ, ինչպէս եւ Հայ Կաթողիկէ Հասարակութեան մարդասիրական զգացմանց վրայ։ Այս վիճակը կը շարունակէ մինչեւ հիւանդաց ամբողջական մեկնումը ի 5 Մայիսի հ. տ., որ թուով իր 13 կիսարուժ փոխադրուեցան Համիտէ Հիւանդանոցը ըստ հրամանագրոյն ընդհանուր զօրավար Մահմաւ Ընվէթի Պաշայի, ինչպէս նաեւ Տիկինները բոլորովին ապաքինուելով արդէն մեկնած էին։

Առանձին Նշանակութեան արժանի է Բարձրագոյն Եպարքոս Հիւսէին Հիւմի Պաշայի այցելութիւնը ի 1 Մայիսի հ. տ., որ հիւանդ զինուորները տեսնելէ ետքը՝ կ'այցելէ նաեւ Անկեւանոցիս բոլոր յարկները, ծերանոցը, զեղարանը եւ խոհանոցը, որոնց մաքրութեան վրայ կը յայտնէ իր հիացումը, ինչպէս եւ զինուորաց շաքարած խնամոց համար յատուկ շնորհակալիք, եւ կը մեկնի հաղորդելով Նորին Վեհափառութեան զայսերական բարեւեները։

Ապրիլ 26ի ժողովոյն մէջ Վարչականը կրկին անգամ նկատի առած էր ի մասնաւորի մայրապետներուն բնակութիւնը, եւ պահ մը Ս. Յակոբայ դպրոցը անոնց յատկացնել մտաբերած, երբ այն պարպուի տարեկան արձակուրդին։ Ասոր վրայ ժողովոյս Նախագահ Սպարպաշեան Ս. Պաշայի դպրոցը յայտարարած էր թէ ինքը տեսած է այն դպրոցը, եւ սեղւոյն ու դիրքին պատճառաւ անյարմար գտած մայրապետներուն բնակութեան։ Գալով հիւանդանոցին մէջ զանոնք ընդունելու առաջարկին, ամենալաւ միջոց մ'է այն, կ'ըսէր, մաքրութեան եւ կարգադրութեան համար։ Եթէ այս դրութիւնը ընդունուի, ինքն ալ խոստացած էր օժանդակել Հիւանդանոցին դրամական աննուկ վիճակին, յարկաբաժնին վերի յարկին վարձը իր անձնական քսակէն վճարելով՝ մայրապետաց բնակութեան յատկացնել. արդէն յարկաբաժնին այդ մասը Ս. Յակոբայ պարտեցին վրայ դուռ ունենալով՝ մայրապետաց երթեւեկին ալ դիրքութիւն կ'ըլլայ։ Աստի ժողովս նկատելով որ արդի ժամանակիս մէջ Հասարակութիւնը կը ցանկայ իր ամենափոքր ունեցածին անգամ տերը եւ պաշտպանը ըլլայ, որոշած էր նախ դպրոցը նոյն պահել. իսկ Անկեւանոցին հիւանդապահութիւնը մայրապետաց յանձնուելուն

¹ Անկեւանոցի Միմեկարեւաններէն Գեղ. Հ. Գարբէլ Ե. Վ. Մեմեկեւան անգամ Հոգարարութեան, պաշտոնապէս հրատարակութեան առաւ եւ այս յօդուածը։

խնդիրը միաձայնութեամբ ընդունած՝ պայմանաւ որ անոնց քով Հասարակութենէն աղիւիներ օգնական գրուի հիւանդապահութեան վարժեցնելու, եւ հիւանդաց եւ մայրապետաց միջեւ թարգմանի պաշտօն վարելու համար, եւ ապա շտրհակալ ըլլալով Հոգեւոր Տիրոջ գրասենական ձեռնադրութեամբ համար, փոխանակ յարկաբաժնին, որ շատ հեռու է հիւանդանոցէն, որոշած էր մայրապետաց բնակութեան յատկացնել յաւետ դպրոցին կից եւ քէտթէպէկ փողոցի անկեան տունը, իսկ անոր գետնայարկը տեղւոյն յարմարութեան պատճառաւ՝ մեծ խոտութի մը վերածել:

Ազգ. վարչութիւնը Մայիս 23ի նիստին մէջ ընդունիլ կ'որոշէ Սինապեանի առաջարկները, զորս յայտնած էր տարւոյն Յունուար 30ի ժողովոյն մէջ (տես վերը) եւ ի գիր ծանուցանել որոնց որ անկ է: Եւ որպէս զի յարկաբաժնի շինութեան փութով ձեռնարկուի, նոր յանձնախումբ մը կը կազմէ յետագայ անձինքներէ, ըստ որում նախորդը պարագայից բերմամբ հրաժարած էր. —

Արամ էֆ. Երամ	{	Ազգ. վարչութեան
Պօղոս էֆ. Շէրպէթեան		նէն
Պօղոս էֆ. Զամճեան	{	Ս. Եակոբայ Հոգաբարձութենէն
Միքայէլ էֆ. Նուրիճեան		
Յովսէփ էֆ. Թօլայեան	{	Ոսկեբերանի թաղականութենէն
Յովսէփ էֆ. Կիւմիւշեան		
Գրիգոր էֆ. Սինապեան	{	Կտակապետարնէն
Արտաշէս էֆ. Հիւրմիւզ		րէն

Ասոնք առաջին գումարման մէջ մասդրեալ յարկաբաժնին համար կ'որոշին նոր յատակաձեւ մը գծագրել տալ, շինութեան հրամանագիրը հանել, փլոնելու տուները քանդել եւ որ ի կարգին: —

Ժամանակի այս միջոցին մէջ Միւթէվէլլիներուն հասած էր վարչութեան Մայիս 23ի որոշմանգիրը, որ է ընդունիլ Սինապեան էֆ.ին առաջարկը այն ձեւով ինչ ձեւով որ ինքը եւ Հիւրմիւզ էֆ.ները իբր Միւթէվէլլի համաձայնած էին 1909 Յունուար 20ի որոշողութեան վրայ, այսինքն թէ 240 օսմ. ոսկին պիտի գործածուի Հայ Կաթողիկէ Հասարակութեան աղքատ մանկուոյ զատկաբարձութեան մինչեւ որ Ուսումնարանի խնամակալութիւնը Ազգ. վարչութեան յանձնուի: Գրութիւնս կը վերջանայ յիշատակելով որ շինութեան սկսելու համար ամեն ինչ պատրաստ է եւ ժամանակը

ամենայարմար: Կը յաւելու նաեւ որ ամեն յատակաձեւ է ի մնաս Ընկերանոցին (տես վերը): Դատարն իր հասցէին յանձնումը վարչութենէն պատշաճ տեսնուած էր Մամճեան եւ Շէրպէթեան էֆ.ներուն: Այս վերջինը ի բացակայութեան Սինապեանի՝ յիշեալ նամակը կը յանձնէ Հիւրմիւզ էֆ.ի որ յետ ընթերցման անմիջապէս կը յայտարարէ թէ կտակապետարաց կողմանէ՝ ո՛ր եւ գօտաբարձութիւն չկայ: Ուստի յատակագիծերը աւարտելուն պէս, եւ 240 օսմ. ոսկւոյ ամեն տարի կանոնաւորապէս վճարումը երաշխաւորող պետական մուրհակին ալ պատրաստուելով՝ առանց ժամանակ կորսնցնելու կրնայ շինութեան սկսուիլ: Արդէն Առաջվերադասի փափագ ալ այս և Յայտարարութիւնս Շէրպէթեան էֆ. է 1909 Յունուար 5 նիստին մէջ կը հաղորդուի Ազգ. վարչութեան:

Այս ամեն եղելութեանց վրայ երբ վարչութիւնը շինութեան վաղ ընդ փոյթ ձեռնարկումը կը սպասէր, նոր գօտաբարձութիւն մ'իւն երեւան կ'ընկայ: Սինապեան տարւոյն Յուն. 3ի նիստին մէջ կը յայտարարէ՝ թէ 240 օսմ. ոսկին կտակապետներուն անպայման պէտք է որ յանձնուի, հակառակ պարագային կը օտարութիւնը նոյն իսկ դրամագլուխը ուրիշ ձեւի ներքեւ ո՛ր եւ կրթական գործի մը յատկացնել, որուն համակարծիք է բացառապէս Հիւրմիւզ էֆ.ն ալ: Ասի կ'ըսէ, առանց նկատի առնելու իրենց ընդունած նախկին պայմանը՝ «մինչեւ Ուսումնարանին խնամակալութիւնը Ազգ. վարչութեան յանձնուի», ինչ որ արդէն տեղի ունեցած էր զինողութեանը Սապագոյեան Կ. Պատրիարքին, վերապահելով միայն կրօնական ուսումը, իրողութիւն մը որ կտակապետներուն եւս ծանուցուած էր, ինչպէս յայտ է յետագայ կրկին նամակներէն, զորս վարչութիւնը նոյն օրը կ'ուղղէ: Առաջինը՝ չորս Միւթէվէլլիներուն, իսկ երկրորդը՝ կտակագիր Եովհ. էֆ. Ալեհ-վերտեանի, որուն մէջ կը ներփակէ նաեւ Միւթէվէլլիներուն գրուած ին օրինակը, զորս կը փութանք հոս յաջորդաբար գաղափարել: Վերջնայ նամակը Ազգ. վարչութենէ ղրկել կ'որոշուի յատուկ պատուիրակութեամբ Կէօ. չեան Արամ Գէլկի եւ Մամճեան Պօղոս էֆ. ի:

ԿԵԹ. ՊԵՏՐԻՆԵ-ԲԵՐԼԻՆԵ
ԿՍԵՈՂԻԿԵ ԸՆԾՈՅ Կ. Պրիւս, 8 Յունուար 1909,

Մեծապատիւ Տէր,

Վարչական Ժողովս Մայիս 23 ներկայ տարւոյ գիրը անգամ մը եւս 26ջ հաստատուել յետոյ, որուն պատասխանը թէեւ չստացանք

Ձեր կողմանէ, այս անգամ կը փութանք յաւելում՝ թէ միեւնոյն նամակին մէջ եղած ինտերվյուք ի մասին Լուսաւորիչ Ռատումարանի այս անգամ վերջացած է, այսինքն յիշեալ Ռատումարանի խնամակալութիւնը ամբողջապէս ենթարկուած է Ե Յուանիս սկսեալ Ազգ. Վրջ. ժողովոյ բացարձակ հսկողութեան, եւ արդէն Վրջ. ժողովս ալ բոլորովին նոր խնամակալութիւն մը ձեւացուցած է եւ առ այդ յատուկ կանոնադրութիւն մ'եւ շինած:

Վրջ. ժողովս այժմ կը ծանուցանէ Ձեզ՝ թէ Ս. Եակոբայ Հոգաբարձութիւնը եւ Ոսկեբերանի թաղականութիւնը պատրաստ են իւրաքանչիւր իրենց պատկանեալ գործերը կատարել, վճարելիք տուրքերը հասուցանել եւ այլն եւ այլն: Միայն թէ Վարչութիւնը դիմելու տայ որ Ալլահվերտեան կտակին գումարը 6000 ոսկին ծանօթ դրամատան մը մէջ պէտք է դրուի շինութեան յանձնաժողով անգամաց դռնէ երեքին տրամադրութեան ներքեւ, այսինքն մէկ կտակաւտարի, մէկ Ս. Եակոբայ Հոգաբարձութեան եւ մէկ Ոսկեբերանի թաղական խորհրդոյ անդամներէն միոյն անուամբ, եւ կամ շինութեան յանձնաժողովը Ասեմպլեան տրամադրութեան ներքեւ:

Հասարակութեան Կ. Պատրիարքը պարտաւոր է գարնանը Հեօնէի Հէրէի միջոցաւ յանձնել Ձեզ իրաւունք, որով 240 օմ. ոսկին Լուսաւորիչ Ռատումարանին յատկացուել յետոյ՝ մնացած գումարը ինչ որ գոյանայ, կէս առ կէս ըստ որոշողութեան եւ համաձայնութեան պիտի բաժնուի ընդ մէջ Ս. Եակոբայ Հոգաբարձութեան եւ Ս. Եուսէն Ոսկեբերանի Եկեղեցւոյ թաղականութեան:

Բաց աստի Դուք Ալլահվերտի Եօհաննէս էֆ. ի կողմանէ կտակաւտար (միութելլի) կարգուած էք, եւ առ այդ Հեօնէի շէրիֆ ցկեան միութելլի կարգուած ըլլալիդ հաստատուած է, եւ յետ մահու օրուան Պատրիարքը իր Վարչական ժողովով պիտի առանձնէ կտակաւտարի պաշտօնը, հետեւաբար անհրաժեշտ է որ այդ Հեօնէի շէրիֆն օրինակը վաւերացեալ մեզ յանձնուի:

Այս ձեւակերպութիւնները կատարելէ յետոյ Ոսկեբերանի տեղւոյն վրայ եղած չէնքերը փլցնելով նոր շինութեան պիտի ձեւնարկուի. եւ թէ այս ձեւակերպութիւնները չկատարուին, Վարչութիւնը չկրնար յիշեալ չէնքերը փլցնելու համար իր հաւանութիւնը տալ:

Ապահովով որ ժամ առաջ յօրինէք Ձեր դրաւոր պատասխանը եւ մեզ հաղորդէք, որպէս զի ձմրան եղանակէն առաջ կարելիք ըլլայ զորին ձեւնարկել:

Մնամք հաւաստեօք սիրոյ

Պետրոս Պօղոս ԺԲ. Սապպաղեան
Կ. Պատրիարք Տանն Կիլիկիոյ

Միեւնպատիւ Տէր

Քրտաշէն էֆ. Հիւրմիւլ

Ղալաթիա

Այս նամակին օրինակը հասցէի տարբերութեամբ ամէն կտակաւտարներուն զրկուած է (Դւ. Պար. ատն. Վրջ. ժող.):

ԿԱՔ. ՊԱՏՐԻԱՐԷՍԻՆ

Կ. Պօղոս, 3 Յուլիս 1909.

ԿԱՔՈՂԻԿԷ ՀԱՅՈՑ

Ալեմափայլ Եօհաննէս էֆ. Ալլահվերտի

Ներկայ տարւոյ 14 Յունուար թուականով համաձայնութիւն մը գոյացաւ Ս. Եակոբայ Ազգ. Եկեղեցւոյն Վարչութեան եւ Ս. Եուսէն Ոսկեբերանի Եկեղեցւոյ թաղականութեան միջեւ, համաձայնութիւն՝ զոր Ձեր Վսեմութեան նաեւ փութացնէք ծանուցանել, եւ դարձեալ Ձեր Վսեմութեան փախաբանաց գահացումը առւած եւ Ձեր կողմանէ եղած խորհի մը պայմանները յարգած ըլլալու համար՝ այդ կտակին հասցիէն 240 օմ. ոսկւոյ գումար մը հասարակութեան աղքատ աղջկոց կրթութեան յատկացնել էր: Այս պայմանագրութիւնը յետոյ ընդունելով՝ Ձեր Վսեմութեան կողմանէ կարգեալ կտակաւտարներու փախաբանաց համաձայն՝ եթէ Լուսաւորիչ Ռատումարանի մատակարարութիւնը Ազգ. Վրջ. ժողովոյ իրաւասութեան ենթարկուի, այդ պարագային վերոյիշեալ կտակին կամ Ձեր բաղձնաց տրամադրութիւնը եղող 240 օմ. ոսկւոյ գումարը փոխանակ Հայ Վախճանի աղքատ աղջկոց դաստիարակութեան յատկացուելու՝ մեղադրի Ռատումարանին պիտոյնց յատկացուի եւ ըստ այնմ յաւելուած մը կամ սրբազրութիւն մ'ըջայ Հեօնէի վրայ: Արդէն այս նպատակով Ձեր Վսեմութեան կողմանէ կարգեալ կտակաւտարներու նաեւ մի եւ նոյն իմաստով նամակ գրուեցան, ծանուցանով մեր Ազգ. Վրջ. ժողովոյ որոշումը. եւ գարնեալ երկու անգամ Տեսքը Արամ Պէյ Կօնէան եւ Պօղոս էֆ. Մամնէանք պատուիրակ կարգուելով Ազգ. Վրջ. ժողովոյն կողմանէ՝ պաշտօն յանձնուեցաւ անոնց բերանացի մեր դիտողութիւնները Ձեր Վսեմութեան ընդարձակօրէն հաղորդել եւ ըստ այնմ պարտ ու պատշաճը տնօրինել:

Եւ սիրոյ հաւաստեօք եմք

Ալեմափայլ Տեառնդ

Պետրոս Պօղոս ԺԲ. Սապպաղեան
Կ. Պատրիարք Տանն Կիլիկիոյ

Ալեմափայլ

Եօհաննէս էֆ. Ալլահվերտեան

Բերա (Դւ. Պար. ատն. Վրջ. ժող.):

Որոշեալ պատուիրակները այս նամակը նորին Վսեմութեան տուելու տանելով՝ չեն կրնար անձամբ տեսնել զինքը անհանգստութեան պատճառաւ, այլ անոր դատեր Տիկին Նեկտարի

Հետ պատիւ կ'ունենան տեսնուելու եւ նամակը յանձնելու, որուն պարունակութիւնը բերանացի եւս կը յայտնեն: Եթէ կտակուած գումարը, կ'ըսեն, փոխանակ մեր Հասարակութեան աղքատ աղայոց՝ ուրիշ Հասարակութեան յատկացուի, մեծ անիրաւութիւն մը գործուած կ'ըլլայ, մանաւանդ խնդրել յիշի տուող Ուսումնարանը ՊՐԷ. Ժողովը Հսկողութեան ենթարկուելէն ետքը: Ցարակոյս չկայ որ վարչութիւնը առաջին անգամ այս նուիրատուութիւնը վերոյիշեալ պայմանի ներքեւ ընդունած է:

Տիկինը այս ամէնը իր հիւանդագին հօրը հանգիստ վայրկեանին ծանուցանել խոստանալով՝ կը յաւելու «Ինչ ֆետ ունի եթէ այս նուիրատուութիւնը ուրիշ Հասարակութեանց աղքատ տղայոց վրայ եւս տարածուի, որուն Գումանով Պոլզու կը պատասխանէ՝ «Տիկին, ընդ հակառակը՝ օգուտ ունի, սակայն ո՞վ է այն մայրը՝ որ ուրիշները կ'ապացնելու համար իր գաւակները կէս անօթի թողու:», Այս խօսքին վրայ Տիկինը տաքերը արատաւքով կը լեցուին, եւ պատուիրակները առուելութիւն մտղմելով իր հօրը՝ կը մեկնին: Այն օր ետքը յետագայ նամակը կ'ուղղուի կտակակատարներէն առ Ազգ. վարչութիւնն:

Կ. Պոլսն, 9/22 Յուլիս 1909:

Ամենպատիւ եւ Գերբերանիկ Հոգեւոր Տէր

Ստացանք Յուլիս 3 Թուակիր գերերնիդ, որուն պարունակութեան վերահասու ըլլալէ յետոյ՝ ի պատասխանի պատիւ ունինք ներկայիս գալ Հաղորդել թէ

Ա. Ալուհիբեան կտակէն գոյացեալ աւարկեան գումարով Ազգ. աղքատ մանկուոյն կրթութեանը նպատակելու նպատակու Յովհաննէս էֆ. Ալուհիբեանի կողմանէ Հեօնէի լէյի-ով ի բացարձակ իրաւասութեամբ կտակակատար (միւթէվէլի) կարգուած ըլլալով՝ նոյն Հեօնէի լէյիին, որուն պարունակութեանը ծանօթ է արդէն ժողովոյդ Պատ. անդամը միմասին, վաւերացեալ մէկ օրինակը առ այժմ 2եղ յանձնելու՝ եւ է պատճառ չենք տեսներ, այսու հանդերձ կը փութանք յաւելուլ թէ պատրաստ ենք միշտ ներկայացնել զայն առ ի տեղեկութիւն, 2եղ կողմանէ յարմար գտնուած ո՛ր եւ է անձին:

Բ. Իբր Գիւթէվէլի նուիրատուութեան գումարին մէկ փոխանցումով՝ պարտականութիւններ ստանձնած ըլլալուս՝ չենք կրնար որոշել ո՛ր եւ է յանձնաժողովոյ մը յանձնել կտակուած գումարը, այլ կարող ենք մի միշտ, ինչպէս արդէն բացատրուած էր շինութեան յանձնաժողովի Պատ. անդամը, ստորագրել ճարտարագետին հետ կնքելի պայմանագրութիւնը

եւ ստանձնել շինութեան համար ըլլալիք վճարումները ըստ նոյն պայմանագրութեան:

Գ. Ս. Գրիգոր Լուսաւորչեան Ուսումնարանի հետ ո՛ր եւ է վերջական կամ անխախտ կապ չենք կրնար ստանձնել, քանի որ ըստ կամոց նուիրատուին կտակուած գումարին հասոյթը պիտի գործածուի ազգային աղքատ մանկուոյն կրթութեան, նախապատուութիւն տալով Ս. Գրիգոր Լուսաւորչի Ուսումնարանին ընթացաւարտներուն, պայմանաւ որ Ուսումնարանն Ազգ. վարչութեան հսկողութեան ներքեւ շարունակէ մնալ եւ բարեղ վիճակով մատակարարուի, որով կը տեսնէ 2եղ նրանութիւնը թէ 2եղ կողմանէ ընդունուած մեր Հեօնէի լէյի վրայ Ս. Գրիգոր Լուսաւորչի Ուսումնարանին ո՛ր եւ է բացորոշ տնօրինութիւն աւելցնել անկարելի է: Բայց աստի այդպիսի տնօրինութիւն մը մեր ցիկեան Մի-Լիւլլիւթեան հետ ալ անհաշտ է եւ Հակասական:

Դ. Ազգային աղքատ մանկուոյն կրթութեան համար 2եղ կողմանէ որոշուած 240 օսմ. սովոր գումարն ալ արդէն չի համաձայնուր այն որոշողութեան հետ՝ զոր առած ենք շինութեան յանձնաժողովոյ Պատ. անդամը հետ միասին քանի որ այդ գումարը շինութեան համար ծախուելիք գումար քանակին համամաս փոփոխութեան պիտի ենթարկուի:

Ահապատիկ, Հոգեւոր Տէր, պայմաններն որոնց մասին համաձայնութիւն գոյացած էր արդէն շինութեան յանձնաժողովոյ Պատ. անդամը հետ, եւ որոնց վրայ նոր փոփոխութիւններու յաւելումը զարմանք կը տեսնենք:

Եթէ ՎՐԷ. Ժողովոյն կողմանէ յարմար գաւառի, ի հարկին կրնանք ժողովոյն կողմանէ կարգուելիք երկու պատուիրակներու հետ ալ խնդրոյն վերջնական մանրամասնութեանց վրայ համաձայնել:

Խնդրելով որ հարկ եղած որոշողութիւններն ընդ հույ առնել տալու բարեհաճէք, որպէս զի երկու երկար տարիներէ ի վեր կ'ախակայեալ այս գործը նոր յսպարդումներու չենթարկուի, եւ սպասելով այս մասին Պատ. Ժողովոյդ վերջնական որոշմանց՝ մնամք

Ամենպատիւ եւ Գերբերանիկ Հոգեւոր Տեսաւոր

Խոնարհ ծառայք եւ Աջակից
(Ստորագիրը) Արտաշէս Հիւրմուզ
Գրիգոր Սինապեան
Նիկոստ. Տիգր.
Միւթէվէլիք Ալուհիբեան կտակին

Ա. Ամենպ. եւ Գերբեր. Հոգ. Տէր
Պոլզու Պետրոս Ժ. Սապարյան
Կ. Պատրիարք կաթողիկէ Հայոց
Նախագահ Ազգ. վրչ. Ժողովոյ
(Դ. Պարս. տան. վրչ. Ժ. Պ.)

Այս նամակներուն փոխանակութիւնն ետքը Ազգ. վրչ. Ժողովոյն կողմանէ երկու պա-

տուիրակ կը կարգուին, Շէրպէթեանն Պոլսոյ եւ փաստաբան Մարիկեանն Մանուկ էֆէնտինները, որոնց լիազօր իշխանութիւն կը տրուի Միւլթէ-վէլլիններուն հետ խորհրդակցելու, եւ կտակին նպատակը հաստատող վաքըֆիէն հէօմէլթը ժամ առաջ պատրաստելու, որպէս զի բաղձացուած համաձայնութիւնը գոյանայ, եւ չափէն աւելի երկարաձգուած խնդիրը այլ եւս վերջանայով՝ շինութեան ձեռնարկելու կարելոր միջոցներուն դիմուի: Այս կարգադրութիւնը 21 Յուլիս 1909, թիւ 146 նամակաւ Միւլթէ-վէլլիններուն եւս կը ծանուցուի: Սակայն հակառակ ընդհանուր բաղձանաց շինութեան ձեռնարկումը ժամանակ մ'իւս կը յապաղէ Ազգ. վարչութեան եւ կտակակատարաց միջեւ տիրող տարաձայնութեան պատճառաւ:

1909 Սեպտեմբերին սկիզբը Մապպաղեան կաթողիկոսութեան հրաժարագիրը կ'ուղղէ Պիոս Ժ. Սրբազան ֆահանայագետին: Որմէ ընդունուելէն ետքն ալ Բ. դրան առջեւ պատրիարքութեան կը հրաժարի, որ նա եւս կ'ընդունի, հետեւաբար Ս. Եսայի: Մապպաղեանի խոստացած դրամական ձեռնառուէն կը զրկուի: Կը հրաժարին նաեւ իրենց գործոց յաճախութեան պատճառաւ Միլթայէլ էֆ. Նուրիճեան գանձապետ եւ Եսայի էֆ. Կասապեան, որոնք իրենց հրաժարագիրը կը մատուցանեն Աստուպետ քամաճեան էֆ.ին: Սակաւ հրաժարելոց տեղ Անտոն էֆ. Պէճիտեանը գանձապետութեան կը կոչէ, եւ յետքէն Տեսուչ Եսայիան էֆ. Մամաճեանն ալ խորհրդականութեան, որոնց յատուկ նամակաւ հաստատութիւնը կը խնդրէ Ազգ. վարչութեան եւ Զանճեան Նորընտիր գանձապետին ստորագրութիւնը Օսմանեան դրամատան: Վարչութիւնը արտաքին 4 Նոյն. Նիստին մէջ Նկատի առնելով չափճեանի եւ հրաժարելոց գործերակերպը՝ անկանոն կը գտնէ զայն, հրաժարագրերը, կ'ըսէ, մեզի պէտք էին ուղղուիլ եւ Հոգաբարձութեան անդամաց պակասը լրացնել մը ժողովոյն իրաւունքն էր ըստ Ազգ. կանոնադրութեան: Այսու հանդերձ ներկիւմ այս անգամին համար՝ կարելորդ գրել կ'որոշէ ուր որ անկ է: Նոյն 30ի գումարմամբ ալ Տ. Եսայի, Ե. Ա. Կէտիկեանը Անկէլանցի խորհրդոյն եկեղեցական անդամ կը կարգուի, վասն զի Բ. Կարբիլէ Ե. Ա. Մէնէվիշեան ընտրութեանէն քանի մը ամիս ետքը՝ իր Արքայհորմէն կոչուելով՝ մեկնած էր ի Վիեննա: Նա եւս սակայն տարիէ մը հրաժարելով՝ տեղը կը փոխանակէ Տ. Կասապեան Ա. Պատուհասեան: Օր մը առաջ ալ

Ալաշվերտեան յարկաբաժնին հիմերը օրհնուելով շինութեան ձեռնարկուած էր:

Արեւրիշեայ պատուիրակները տեսնուելով Միւլթէվէլլիններուն հետ՝ ո'ր եւ զինողութիւն չեն կրնար ընել տալ, որ Ալաշվերտեան կտակէն 240 օսմ. ոսկոյ գումարը անպայման աճեն տարի կանոնադրապէս իրենց տրուիլը երաշխաւորող հէօմէլթ մը կ'ուղղին առանց փոխադարձ ապահովագիր մը տալու: Թէ այն գումարը ի նպատակ Հայ Կաթողիկէ աղքատ ուսանողաց պիտի գործածուի, մանաւանդ թէ վստահութեան խնդիր եւս կը յարուցանէին: Մարիկեան իր բոլոր փաստաթանկան ճիշդ կը թափէ... վստահութիւնը երկու կողմանէ պէտք է ըլլալ կ'ըսէ... բայց անօգուտ, կտակակատարը ո'ր եւ կերպով չեն ուզեր համոզուիլ, որով դարձեալ խնդիրը նոյն կը մնայ, եւ պատուիրակները Ազգ. վրչ. Ժողովոյն 1910 Յուլիս 30 Նիստին մէջ եղելութիւնը մի առ մի կը պատմեն: Ի մէջ այլոց Մարիկեան կը խորհրդաձեռնէ՝ թէ ուրիշ է անհատական վստահութիւնը, ուրիշ է հանրային վստահութիւնը: Ես կրնամ վստահութիւն ունենալ Միւլթէվէլլիններուն չորսին ալ վրայ, բայց ոչ հանրութիւնը, թէ՛ ոչ պետական վաւերացմամբ, որ միայն կրնայ վստահութիւն ներշնչել հանրային գործոց մէջ: Ուստի պէտք է այս վաւերացումը գործադրել տալ, ապա թէ ոչ պարտաւոր կը մնանք հանրութեան առջեւ: Հանդերձ այսու ժողով կտակը կորսնցնելու համար նախկին խոհեմ ընթացքը շարունակել կ'որոշէ, միայն թէ յանձնառութեան տեսակը գտնէ ձեռք բերելու հարկը կը զգայ, որպէս զի ապագային թէ՛ շինութեան մէջ խարդախութիւն պատահի, նորընտիր Կ. Պատրիարքը անկարելի կը տեսնէ, վասն զի, կ'ըսէ, կտակակատարը չեն ընդունիր ո'ր եւ միջամտութիւն, այլ միայն թէ՛ պէտք ըլլայ՝ տեսակցիլ Շէրպէթեան Պոլսոյ եւ Թուրքիան Եսայիէ էֆէնտիններուն հետ: Ասոնց՝ իրեն համակիր անձինք կտակակատարաց աղաւտն կը արուի վերջապէս, որ յանձնառութեան տեսարին օրինակը ջանան ձեռք բերել եւ կարելի եղածին չափ շինութեան վրայ հայել:

Հոգաբարձութիւնը տասը ամիս Ազգ. վարչութեան հետ ո'ր եւ գործ չունենար, բացի Ալաշվերտեան յարկաբաժնի խնդրէն, անկէ ետքը սակայն ոչ սակաւ դիմումներ կ'ընէ կալուածական տրոց վերաբերմամբ: Վասն զի Պետութիւնը Սահմանադրութեան հռչակումէն



սկսելով երեք տարւան տուրքը՝ մինչեւ առաջինայ տարւոյն Մարտի սկիզբը վեց ամիս պայմանաժամ տալով՝ ամբողջովին կը պահանջէր, ինչ որ բռնակալութեան աստի կանոնաւորապէս չէր գանձուեր, եւ յետաժնաց տուրքերէն ալ տասնին մէկը, հակառակ պարագային՝ վարձակալաց վճարումները գրաւել կը սպաւորար, Ուստի Հոգաբարձութիւնը 1910 Օգոստ. 8/20 գրեւով եղելութիւնը կ'իմացնէ Ազգ. վարչութեան եւ կը յաւելու թէ՝ քանի մը ամիս առաջ պետական արոց ի հաշիւ վճարուած 250 ոսկիէն զատ՝ 1600 օսմ. ոսկւոյ գումար մը եւս կը պահանջէ Մալիէն (Ելեւստից պաշտօնարան), Ուստի վիճակին պէտք է անմիջական դարձանը հոգացուի, ապա թէ ոչ Անկեւանոցը փակելու կը ստիպուինք:

Այս գրութիւնը Ազգ. վարչութեան 1910 Օգոստ. 13 նիստին մէջ կարգադրուելով՝ ժողովը զանազան միջոցներ կը խորհի իրաց ծանր վիճակին առաջ քննելու համար: Կը մտածէ այդ 1600 ոսկւոյ մեծաքանակ գումարը զեղչել տալուն վրայ՝ յառաջ բերելով յետագայ երեք կէտերը. — Ա. Կալուածադրոց մէջ աղքատանոցին իրենւ եկամուտ Նշանակուիլը, Բ. Բանջարանոցին զափազանց գնահատուած ըլլալը, Գ. Պետական շնորհք բարեգործական հաստատութեանց կալուածներէն, թէեւ եկամուտ Նշանակուած ըլլան, փոխանակ 10ի 5 առ հազար միայն տուրք առնուիլը ըստ խորհրդանութեան Բարեգնան Կ. Պատրիարքին, որմէ օգուտած եմ, կ'ըսէ, Աստուայի մէջ եկեղեցական կալուածոց համար 5 առ հազար միայն արձանագրել տալով իրենւ տուրք: Ժողովը հաստատելով հանգերձ Կ. Պատրիարքին խօսքը կը դիտէ թէ՝ այն շնորհք գործադրելի չէ հոս, եւ որպէս զի Մայրաքաղաքիս վրայ եւս աարածուի այն, պէտք է որ բոլոր Պատրիարքները միասին աշխատին, Հանգերձն այսու կ'որոշուի պատրիարքական թաղերի մը գրեւ եւ Պետութեան ուշագրութիւնը հրաւիրել առաջին եւ երկրորդ կէտերուն վրայ, Թողովը ապագային երրորդ կէտը՝ խնդիրը առ այժմ չկնճռոտելու համար:

Մոմճանն Պոզոս իր ծանօթ փորձառութեամբ կ'ըսէ՝ թէ ապահովութեան համար հարկ է որ մենք աւելի գործնական ճար մը մտածենք այս տուրքին վճարման համար. ուստի եթէ հոն սիւրէթներ կան, խնդրն դիմում ընելու է տուրքերուն հաշուեկանին համար: Դարձեալ միւս կողմանէ հանդանակութեան ձեռ-

նարկելու է, ուրիշ կերպով դժուար պիտի ըլլայ ճար մը գտնել: Ժողովականները առ հասարակ Մոմճանն էֆ.ին համակարծիք գտնուելով հանգերձ՝ կը կրկնեն դարձեալ իրենց առաջին որոշողութիւնը, այսինքն գրել նախ հրկու թաղերիները եւ հետապնդել, եւ յաջորդ նիստին ալ հանգանակութեան գործնական ձեւը մտածել եւ ըստ այնմ գործի ձեռնարկել:

Այս պարագաներուն մէջ Պերայի Ոստիկանապետ Մուհամմէտ Պէկը յատուկ նամակաւ փափաք կը յայտնէ Բարեգնան Կ. Պատրիարքին ներկայ գտնուելու Միլիթարիս Միլիթի (Ազգին Աւագանեաց) ժողովոյն: Ուստի ըստ հրաւիրանաց Կ. Պատրիարքին յիշեալ Պէկը կը ներկայանայ Ազգ. Երեսփոխանական ժողովոյն գումարեալ 1910 Սեպտ. 10, եւ կ'ըսէ՝ «Թաղեցիներէն ինձ հասած գնահատանաց հետեւանք կ'առաջարկեմ Ս. Յակոբայ աղքատանոցին եւ յիմարանոցին պլուր փոխագրութիւնը, եւ եթէ կարելի է նաեւ հիւանդանոցին», Ժողովս այս առաջարկին կը պատասխանէ՝ թէ Հասարակութիւն շատոնց ի վեր ունեցած է յիմարանոցը ոլլուր փոխագրելու միտքը, սակայն դրամական անձկութիւնը յետս կանգնեցած է զինքը: Աղքատանոցին գալով՝ կը խոստանայ բարեկարգել զայն, կարողները եւ արիկաները հեռացնելով՝ եթէ ոստիկանութիւնը հետադրուած համար իր ձեռնառութիւնը չզլանայ, աննորոգելի շէքերը փյոցնելով եւ փաշաններն ալ նորոգելով: Մուհամմէտ Պէկը այս ամէնը Տերութեան հաղորդել խոստանալով կը մեկնի:

Դեկտ. 3 նոյն ատրի գումարեալ նիստին մէջ Վարչութիւնը դարձեալ Անկեւանոցին յետաժնաց արոց վճարման խնդրով կը զբաղի: Հերպէթճեան Պոզոս կը յայտնէ իր տեսակցուութիւնը Մոմճանէպէճի հաշուակալին հետ, եւ մեր բոլոր փաստերը, կ'ըսէ, իրեն ըացատրեցի, բայց հակառակ իմ բոլոր քանիցս յուսադրական խօսք մը չսեցի բերնէն: Այն աստի ժողովը կը խնդրէ Ելաման Նրամ էֆ.էն որ տեսնէ Տէֆթէրլարը ընդհանուր հաշուակալը եւ առաջարկէ որ ամբողջ պարտքը 7200 օսմ. ոսկի ըլլալով՝ Հոգաբարձութիւնը պիտի ջնայ ամէն ամիս 60 օսմ. ոսկի վճարելով՝ տաք տարուան մէջ հատուցանել հիւանդանոցին պարտքը, եւ արդէն կառավարութեան օրէնքն ալ ընդհանուր պարտքը տաք տարուան մէջ լնցնել կը տրամադրէ, եթէ կայ տարբերութիւն մը, այն ալ մասնաւոր ճարներու մէջ է:

Երաման էֆ. կը խոստանայ տեսնել Ցէֆ-
թերտարը, սակայն չեմ յուսար, կ'ընէ, որ կա-
րենայ ընդունիլ այս պայմանը, որովհետեւ ան-
գամ մը որ Երեսփոխանական ժողովէն եւ ծե-
րակոտէն ընդունան է օրինագիրը, չի կրնար
տարբեր կերպով մեկնել եւ անոր տրամադրու-
թեան բիւ կամ շատ հակառակ գործել:

Վերոյիշեալ թարգմանները ստանին գրուած
եւ անպատասխանի մնացած էին, յետաժողո-
տոյը պայմանաժամը լրացած եւ Անկերանոցին
շուրջ գտնուած 42 կալուածոց վարձքերը Պե-
տութենէն գրաւուած, որով վարձակները
ամեն ամիս հարկահաններուն պիտի ընէին իրենց
վարուածքները: Հոգաբարձութիւնը սակայն իր
խորինամտ Տնտեսագիտութեամբ կը յաջողէ հա-
մաձայնութեան գալ հարկահանաց հետ, առաք-
կելով՝ թէ դուք նոր վարձքերը միայն պիտի
գանձէք եւ յետաժողոտոյն ամենեւին լուր
չունիք. ուստի թող տայիք որ մեր գրամա-
հաւաքը գանձէ թէ նոր եւ թէ հին վարձքերը
միանգամայն, որով Ցերութեան պահանջը ամեն
ամիս անելի շատ եւ շատ կը հաստոցուի: Հար-
կահանները տեղի կու տան այս առաջարկին
առջեւ՝ հարկաւ Ցերութեան հրամանաւ, եւ
վարձքերուն գրաւուը կը վերցնեն, եւ հոգա-
բարձութիւնը, ըստ առաջնոյն, ինքը կը սկսի
գանձել վարձքերը իր գրամահաւաքին ձեռքը,
արտաքին կարգի խնայողութեանց ձեռք զարնել,
աշխատ հիւանդները խորանջը ընդունիլ, պաշ-
տնէից ամսականները գեղել եւ որ ի կարգին.
վերջապէս Ս. Եակոբայ Անկերանոցը տխուր
վիճակի մը կը մատնուի: Բարեբախտաբար այս
վիճակը շատ կարճ կը տևէ: Վասն զի հոգա-
բարձութիւնը կալուածոց վարձքերը եւ թողա-
կաւ որ հիւանդաց սակագիրը բարձրացնելով՝
Անկերանոցին եկամուտը տարեկան ծախուց հետ
փաղառութեամբ պետական տոյց կը հաւասա-
րակուէ, եւ կը սկսի առաջուան պէս անխտիր
ընդունիլ ամեն շալ կաթողիկէ աշխատ հիւանդ-
ները, որոնց համար յատկապէս կանգնուած է
Ս. Եակոբայ հաստատութիւնը:

Թերթեան Կ. Պատրիարքն ալ մուրհակ մը
կու տայ Ալաշվերտեան կառկին Միւլթէվէլլի-
ներուն ամեն ասորի անխափան իրենց 240 ոսկի
վարելու: Ալաշվերտեան յարկաբաժնի հա-
տոյթէն, ինչ որ Ազգ. վըւ. ժողովը վերապա-
հած էր իբրեւ երաշխիք՝ աւանդ կարենալու հա-
մար կտակահատարներէն իրենց Միւլթէվէլլիու-
թեան հէօճէթը շէրիին օրինակը, ինչպէս նաեւ
չենել տալ վարըճիւիէ հէօճէթը շէրիին սի-

շեալ գումարին միայն շալ կաթողիկէ աշխատ
ուսանողաց գործածուելուն: Հոս յատաջ կը
բերենք Թերթեանին Կ. Պատրիարքին տուած
մուրհակին օրինակը, որուն բնագիրը սաճ-
կերէն տառերով յօրինուած եւ Ցերութենէն
վաւերացուած է:

5341. Իշ պու վարաք զԵհրեմէ մուհար-
բէր իցմա վէ մէօհիւր Պէյօղլուտա Սաքըզ
Աղաճը ճառատէսինտէ վաքը Էրմէնի Բաթոյիկ
Բաթրիքիսնէսինտէ միւքիմ Էրմէնի Բաթրիկի
Բաթրիկի վէ կաթողիկոսու Պօղոս Պետրոս
Թերթեան էֆէնտի Հաղբէթլէրիին քէնտի
մէօհիւր վէ ինչաք օյմալ իլէ պիլ քոյաթտա-
տիք քըլլեմը

28 Բեանուրի էվէլէ 326
Թուականս երկու գրոյնթապի
վայա գրուած է, մին 50 գահէ-
կանի եւ միւր 20 բաղայի

Ալաշվերտի Եւլիանէն էֆէնտի Հաղ-
բէթլէրիին հիւլէ վէ վաքը իլլէմը օյտուղու
նաքուտուտա Պէյօղլուտա ճառատէ քէպի
վէ ինչաք զքաղը քօշէսինտէ Սուրբ Աղաւալ
խաթախանէսի իլէ Ոսիքեան Բիւսիսինտէ
այիտ մուքթալը արախիւղէրին Բաթրիքիսնէ
վէ միլլէթ մէջիսի վաքը միւքպուր միւլթէվէլ-
լիէրի թարաֆընտա տէրսէպի վէ ինչա օյաւն
Էպիսիոսի խիթամընտա իհթիպարէն Էրմէ-
նիպի շարթը վաքը սուրբ խիթիլք իւղը պէ-
հէր սէնէ միւլթէվէլլիւտա մէկպուրին մէկքիւր
խաթախանէ վէ Բիւսիս խաթաթլէրի թարա-
ֆընտա 241) տաթիլ ինչաք օյմանի իթա օյու-
նաճաղը վէ մէկաղը մէկպուր պէհէր սէնէին
քէնտուրի էվէլլի իպթիտաքնտա վէրիւնու
Էպիսիոսի մէկքիւր խիթիլ մուլթաք շարթը
ըլա իլք թէտիէ 1911 սէնէնի Բեանուրի էվ-
վէլ իպթիտաքնտա իճա խիթիլ քէլիին վէ
մէկաղը մէկպուրն թէտիսին թէտիսին մէկ-
քիւր Էպիսիոս խաթաթլէրնտա են էվէլլ մէկ-
քիւր 241 լիւրայի օյմանի իթաք օյունաճաղը
միւլթէվէլլի ինչալ թահիս սէնէնտի Բաթրիք-
խանէ վէ միւլթէվէլլիւտա միւլթէվէլլիւտա
մէկպուրին իթա քըլլեմը. 28 Բեանուրի էվ-
վէլէ 326:

Պէյօղլուտա Սաքըզ Աղաճը ճիվարքնտա
վաքը Էրմէնի Բաթոյիկի Բաթրիքիսնէսինտէ
միւքիմ Էրմէնի Բաթրիկի Բաթրիք վէ կաթո-
ղիկոսու Պօղոս Պետրոս Թերթեան

Այս ստորագրութիւնը երկու
10 գահէկանի գրոյնթապի երկու
վայա գրուած է:

S Կ

Իշ պու վարաք զԵհրեմէ միւլթա մէօհիւր
վէ ինչա Պէյօղլուտա Սաքըզ Աղաճը ճառատ-
սինտէ վաքը Էրմէնի Բաթոյիկի Բաթրիքիսնէ-
սինտէ տարէի ճախուտէսինտէ միւքիմ Էրմէնի
Բաթրիկի Բաթրիկի Բաթրիքիսնէսինտէ միւք-
պուր Թերթեան էֆէնտի Հաղբէթլէրիին քէն-
տի մէօհիւր վէ ինչաք օյտուղուտա շահաճէթ
էվէրիլ 28 Բեանուրի էվէլէ 326:

2*

Այսպիսով Պետիկը թիւնէլ խանութաւ
2 նուաճարու օտառաւ միւրիմ տաճաւ վէճիւ
նշան Կ. Հալպալան:

Պէտիկը Սպարապետ տաճաւ Երմէնի
Քաթիկէ Բաթիկէ խանութաւ միւրիմ Բաթիկէ
Յոսիկի Միւրիմ Երմէնի:

Իսկ Ալաշկերտեան յարկարարին շինու-
թիւնը որ ձմեռուան պատճառաւ քիչ ժամա-
նակ է ի վեր դադարած էր, 1910 մարտին մէջ
վերսկսելով՝ նոյն տարուան վերջերս արտաք-
սապէս բոլորովին կ'աւարտի, իսկ ներքին քանի
մը պակասները յաջորդ տարուան վերջերս կը
լրանան: Հետեւաբար Ս. Յովսէփ Ազգ. Անկեղա-
նոցին չօգտարարութիւնը եւ Ս. Յովսէփ Ոսկե-
բերան Եկեղեցւոյ Թաղակառութիւնը կը փու-
թան հաւաքարար ի դիմաց Հայ կաթողիկէ
Հասարակութեան շնորհակալեաց նամակ մ'ուղ-
ղել բարերար Յովհ. Էֆ. Ալաշկերտեանին եւ
կառակապետար Տեղաւր եւ Տիկնայոց, որոնց պատ-
ճեններն հոս գնել ոչ թէ պատշաճ՝ այլ պարտք
է նուիրական:

Ասեմաշուք Տէր

Աստուածատուր պարգեւ մ'է մարդկային
խնայականութիւնը՝ որով կ'ըմբռնէ ճշմարտե-
րէն գործելով՝ չքնաղ առաքելութիւն, որով
անհասանելի կը գերազանցեն իրենց նմանեաց
մէջ, եւ աստուածային բարեբարութեան նշոյլ-
ներն կը ցոլայնեն մարդկային ազգին մէջ:

Ազդեցեալ է մարդկային կեանքը եւ ապա-
կանցող, բայց սերնդոց յաջորդական շարքին
մէջ կը յառնեն երբեմն եղական գեմբեր՝ որոնք
անմիջական կարգը կը գառուին. այսպէս դիւ-
ցազնական քաղաքները, դիտական հերոսներ,
բայց որ գերազանց է գովելի եւ բրիտանեա-
վայել մարդկութեան բարեբարներ, որով ոչ
միայն անոնց անունը կ'ապրի դարեւ դար, այլ
միշտ արգիւնք եւ արգասիք կը պղծարարէ, եւ
արդեամբք կ'ապրի բարեբարականերու մէջ:

Այս կարգի է 2-րդ Ասեմաշուք Տէրութեան
առաստանեան բարեբարութիւնը Հասարակու-
թեան մէջ, որով 2-րդ յիշատակին կանգնեցաւ
անմահ կոթող մը, որմէ երբեք պիտի բարե-
բարուն Հասարակութիւն, ազգաւ պատանիներ
պիտի գոտարարակունին եւ զարգանան ուսման
գիտութեան եւ բարեկարգութեան մէջ, բախ-
դայութի անկախներն եւ հիւանդներն սփոփանք
եւ միւրիմարութիւն պիտի գտնեն, եւ Եկեղեցին
պիտի պայծառացայ վայելչ շքեղութեամբ, եւ
այսպէս եռանկայն ներաշնչականութեամբ օրհ-
նեղութիւններ պիտի բարձրանան Ալաշկեր-
տեան Աշտուատոճ գերբաւաստանին անունը եւ
փառքը յաւերճացնելու:

Երախտապարտ է 2-րդ ազգս համբուն, յա-
նուն որոյ անգամբն Հոգաբարձութեան Ս. Յա-

կորոյ Անկեղանոցի եւ Թաղական խորհրդոյ
Ս. Յովսէփ Ոսկեբերան Եկեղեցւոյ պարտականու-
թիւն կը համարինք ներկոյ դրութեամբ խորին
շնորհակալութիւն յայտնելու 2-րդ այս վէճանմէ
նուիրատուութեան համար, եւ մարգիւնու փո-
խարէն բարերար Աստուած մէ 2-րդ խաղաղ եւ
անգործաւաճ եւ երջանիկ տարիներ:

Ազգային այս երախտապարտութեան իրեւ-
փորը հաւաքարար որոշեցինք ամէն տարի մշտնա-
շնուաւոր ձայնաւոր պատարագ մատուցանել 2-րդ
գիտաւարութեան Ս. Յովսէփ Ոսկեբերան Եկե-
ղեցւոյ եւ Ս. Յովսէփ մարտան մէջ, որպէս զի
ներկայ եւ ապագայ սերունդը վերջելով այդ
բարեբարութիւնը մանակից ըլլալ եւ միահա-
մուռ օրհնեն եւ մարդկանցիկ կործան Մեծ
Բարեբարիք անմահ յիշատակին: Ուստի կը
խղթրենք որ բարեհաճիք 2-րդ պատշաճ դատա-
օրէն որոշելով հաղորդել մեզ արձանագրելու
համար մշտնաշնուաւոր պատարագաց տնտա-
կին մէջ:

Ընդունեցէք, Ասեմաշուք Տէր, խորին յար-
գանակ եւ մեծարանայ հաւատարմութիւն, որով եմք

Բերա, 10/23 Դեկտ. 1911

Ասեմաշուք Տեղաւր

Ա. Ասեմաշուք Տէր

Յովհաննէս Էֆ. Ալաշկերտի

Բերա

Տ. Կ.

Տ. Կ.

Ս. Յովհ. Ազգ. Անկեղանոցի Ս. Յովհ. Ոսկ. Եկեղեցւոյ
Հոգաբարձութեան Թաղակառութեան

Աշտուատայ Տիկնայոց

Եւ Մեծաշուք Տեղաւր

Աստուածադիր բնական օրինաց համալայն՝
ազնիւ եւ վեհ սիրտերն հաղորդակից են մի-
մեանց: Այսպէս Ալաշկերտեան Ասեմաշուք
Յովհաննէս Էֆենտիքի Հասարակութեան շնոր-
հած մանաւանդ այս վերջին առաստանեան բա-
րեբարութեան հոյակապ գործին մէջ 2-րդ հո-
գածու օժանդակութիւնն՝ որով ի գլուխ հա-
նեցիք յարկարարին շինութիւնը, 2-րդ անուն-
ներն ալ անանջատ պիտի պահէ Մեծ Բարեբա-
րին յիշատակին հետ: Ներկայ թէ ապագայ
սերունդը այդ բարեբարութեան արգիւնքն
վայելելով՝ երբ օրհնութեամբ պիտի փառա-
բանէ Ալաշկերտեան Մեծ Բարեբարին անմահ
յիշատակը, անոր հետ գովութեամբ եւ երախ-
տապարտութեամբ պիտի յիշէ նաեւ 2-րդ
անունները:

Ուստի կը փութանք յայտնել խորին շնոր-
հակալութիւններն 2-րդ ազգեցիկ ինամածու-
թեան համար այս բարենպաստակ գործին մէջ,
որմէ մեծապէս պիտի նպաստաւորուին այս երկու
ազգային օգտաշատ հաստատութիւնները:

Ընդունեցէք ուրեմն, Աշտուատայ Տիկ-
նայոց եւ Ասեմաշուք Տեղաւր, մեր խորին մեծա-

բանաց զգացումներն իբր գոյնն հաւատիք այն
յաւերժական երախտապարտութեան, զոր ինչ-
պէս մեղք՝ նոյնպէս եւ բոլոր Հասարակութիւնս
պիտի պահէ ցմիշտ շնորհ հանգեպ, որով առգո-
րեալ մնալք

Աղեւափայլ Տիկնանց

եւ Վերամշուք Տեաբք

Բերա, 10/23 Դեկտ. 1911

Աղեւափայլ Տիկնայք

Աննա Մըսրըլեան եւ Նեկտարինէ

Տիւղեան եւ Վերամշուք

Տեաբք Դրիգոր էֆ. Աննայեան եւ

Արտաշէս էֆ. Հիւրմուշ

Բերա

Տ. Վ.

Տ. Վ.

Ս. Յակ. Ալք. Անկեանցի
Հոգաբարձութեան

Ս. Յոհ. Ռոկ. Եկեղեցւոյ
Թաղականութեան

Բերա, 21 Դեկտեմբեր 1911

Յարգւոյապատիւ Վարդապետ

եւ Աղեւաշուք Տեաբք

Հօրս հետ կրկին անգամ խորհրդակցելով
մատուցանելիք մշտնջենաւոր Չախաւոր պատա-
րագնեւոր մասին՝ որոշեցինք Ձեռնէ խնդրել որ,
եթէ կարելի է, մին տեղի ունենայ 16 նոյեմ-
բերին ի դիտարարութեան երկու վախճանեալ
եղբարցս Աբրահամու եւ Ներսէսի — իսկ եր-
կորդիկ Ապրիլ ամսոյն վերջին կիրակէն, ըստ
կարելոյն:

Հայրս մատուցանէ Ձեզ համայն շնորհա-
կալութիւնքն:

Հաճեցէք ընդունիլ, Յարգւոյապատիւ Վար-
դապետ եւ Աղեւաշուք Տեաբք, մեծարանցա
հաւատաբար

Նեկտար Տիկ

Յարգւոյապատիւ

Պատուհասեան Վարդապետ

եւ Աղեւաշուք Տեաբք

Անշուք Հոգաբարձութեան

Ս. Յակոբայ Անկեանցի

եւ Թաղական Խորհրդոյ

Ս. Յով. Ռոկ. Եկեղեցւոյ

Հ. ՌՍԱՀԱԿ Վ. ՍՐԱՊԵԱՆ
Միայնակ Ամուսնում:

ՎԻՐԸ



Südarmenien und die Tigrisquellen nach griechischen und arabischen Geographen.

(Fortsetzung.)

Nicht sicher ist bis jetzt, auf welchen Tigrisarm sich die Bemerkung bezieht, mit welcher Plinius seinen Artikel über den Tigris einleitet: oritur in regione Armeniae maioris, fonte conspicuo in planitie. loco nomen Elegosine¹ est, ipsi qua tardior fluit Diglito. Auf die Quellgrotte des Bykalen-su und den Šach-Miran-čai, der in den Gebirgszügen des Qaza Pēt šar entspringt, passt dieselbe aber nicht, viel eher auf die Ebene zwischen Charput und dem Gölgik. Dazu würde auch der Name des Quellortes stimmen, sofern *Elegosine* einem schriftarmenischen *եղեգնաչէն* „von Rohr erbaut“ oder *եղեգնաճին* „Rohr erzeugend“ entsprechen kann. Derselbe Name steckt auch in der Station *flegofana* der Tab. Peut. Segm. XI, 4/5². Die Notiz würde also den Anfang des Berichtes über den Argana-su bilden, der dann durch die Einschlebung des Artikels über den östlichen Tigris (Bohtān-su) auseinandergerissen wäre.

Es muss hier noch einem allgemeinen Irrtum bezüglich des Namens des Flusses bei Plinius begegnet werden. Dieser wird überall als *Diglito* aufgeführt (z. B. H. KIEPERT, Lehrbuch der alten Geographie, § 79, Anm. 1), was eine aramäische Form ܕܝܓܠܝܬ (also mit Artikel!) voraussetzen würde. Allein der Name des Tigris wird im Aramäischen, und zwar auch noch im Syrischen, stets ohne Artikels gebraucht, so gut wie der seines Zwillingsbruders. Ueberdies wäre bei jener Auffassung die Wiedergabe des auslautenden ā durch o in so früher Zeit auffällig. Allein *Diglito* ist hier nicht Nominativ, sondern gemäss der bekannten lateinischen Kon-

¹ So E. elosinae D., aelosine F., elosine R.

² Dieser Ort scheint jedoch nördlich vom Wansee gelegen zu haben, wofern die fünfzehn Masseinheiten davon entfernte Station *Dagneuana* (Rav. Dognavana) dem *daḡuāna* des Ptol., d. i. der Stadt Դաղուան *Datvan*, mittelarm. *Tadvan* entspricht. Der Name müsste dann über *ΔΑΓΓΑΥΑΝΑ* (γγ = gn für ng) aus *ΔΑΤΑΥΑΝΑ* entstellte sein. Auch das *ΔΑΥΑΥΑΝΑ* des Ptol. ist aus *ΔΑΤΑΥΑΝΑ* verstimmt.